ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- նոյեմբերի 2026 թվականի №-Ա

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՏՐԱՆՍԳԱԶ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

1) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), համաձայն իր 2020 թվականի օգոստոսի 19-ի №273Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) №3 հավելվածով սահմանված՝ հանրային կազմակերպությունների կողմից կատարված գնումների մասին հաշվետվության ներկայացման և գնումների կարգերի նկատմամբ սահմանված պահանջների կատարման մոնիթորինգի կարգի, իրականացրել է «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Տրանսգազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2026 թվականի 1-ին եռամսյակի գնումների առանձին գործարքների մոնիթորինգ,

2) համաձայն Որոշման №2 հավելվածով սահմանված՝ հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ պահանջների (այսուհետ՝ Պահանջներ) 18-րդ կետի 2-րդ ենթակետի՝ մրցակցային ընթացակարգերով գնմանը մասնակցության հայտերի ներկայացման վերջնաժամկետը, որը հաշվարկվում է գնման գործընթացի կազմակերպման մասին հայտարարությունը և հրավերը Պահանջների 6-րդ կետում նշված կայքերում հրապարակման ամսաթվից, չպետք է պակաս լինի 10 աշխատանքային օրից, եթե գնման գինը գերազանցում է 70 միլիոն դրամը՝ առանց ԱԱՀ,

3) վերոնշյալ մոնիթորինգի արդյունքում պարզվել է, որ 2026 թվականի 1-ին եռամսյակում Ընկերության կողմից Պահանջների 18-րդ կետի 2-րդ ենթակետով

սահմանված՝ մրցակցային ընթացակարգերով գնմանը մասնակցության հայտերի ներկայացման համար նախատեսվել է նվազ ժամկետ,

4) Պահանջների 18-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված՝ նվազագույնը 10 աշխատանքային օրվա ժամկետի հնարավոր խախտման փաստի ուսումնասիրության նպատակով Հանձնաժողովի կողմից 2026 թվականի հոկտեմբերի 5-ին Ընկերության նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ, որի վերաբերյալ վերջինս ծանուցվել է Հանձնաժողովի 2026 թվականի հոկտեմբերի 5-ի ՆՄՄ/34.3-Մ2-14/5442-2026 գրությամբ,

5) Ընկերությունը, վարչական վարույթում քննարկվող հարցի վերաբերյալ 2026 թվականի հոկտեմբերի 9-ի N01/18.5/3995-2026 գրությամբ, հայտնել է, որ 2026 թվականի 1-ին եռամսյակում Պահանջների 18-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված՝ մրցակցային ընթացակարգերով գնմանը մասնակցության հայտերի ներկայացման առնվազն 10 աշխատանքային օրվա ժամկետի խախտումը պայմանավորված է եղել տեխնիկական բնույթ կրող վրիպակով: Միևնույն ժամանակ, Ընկերությունը տեղեկացրել է, որ ձեռնարկվել են միջոցներ՝ հետագայում նման խախտումները բացառելու նպատակով,

6) Հանձնաժողովի կողմից իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերության կողմից չի ապահովվել Պահանջների 18-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված՝ մրցակցային ընթացակարգերով գնմանը մասնակցության հայտերի ներկայացման՝ նվազագույնը 10 աշխատանքային օրվա ժամկետը: Մասնավորապես՝

ա. 2026 թվականի 1-ին եռամսյակում իրականացված բաց առաջարկների հարցմամբ կազմակերպված մրցակցային գնման ընթացակարգերի մասով գնմանը մասնակցության հայտերի ներկայացման վերջնաժամկետները ենթակա էին սահմանման՝ Պահանջների 6-րդ կետում նշված կայքերում հրապարակման ամսաթվից ոչ ուշ, քան 10 աշխատանքային օրվա ընթացքում, այն է՝

- մինչև 2026 թվականի փետրվարի 13-ը՝ TG-2.2-30.01.26-001 ծածկագրով՝ Ընկերության կարիքների համար ավիացիոն յուղի (MC-20) ձեռքբերման գործարքի մասով, մինչդեռ նշյալ գործարքի մասով հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանվել է մինչև 2026 թվականի փետրվարի 9-ը,
- մինչև 2026 թվականի փետրվարի 25-ը՝ TG-2.2-11.02.26-004 ծածկագրով՝ Ընկերության կարիքների համար էթիլմերկապտանի (C_2H_5SH) ձեռքբերման

գործարքի մասով, մինչդեռ նշված գործարքի մասով հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանվել է մինչև 2026 թվականի փետրվարի 23-ը,

- մինչև 2026 թվականի մարտի 4-ը՝ TG-2.2-18.02.26-007 ծածկագրով՝ Ընկերության կարիքների համար պողպատե խողովակի ձեռքբերման գործարքի մասով, մինչդեռ նշված գործարքի մասով հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանվել է մինչև 2026 թվականի փետրվարի 26-ը:

Այսպիսով, Ընկերության կողմից Պահանջների 18-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված՝ մրցակցային ընթացակարգերով գնմանը մասնակցության հայտերի ներկայացման վերջնաժամկետները վերը նշված գործարքների մասով նախատեսվել են նույն ենթակետով սահմանված ժամկետի խախտմամբ, և Ընկերությունը նույնպես որևէ առարկություն չի ներկայացրել նշված ժամկետների չպահպանման փաստի առնչությամբ,

7) «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործունեության լիցենզիա ունեցող անձանց կողմից օրենքի դրույթները, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում Հանձնաժողովն իրավասու է կիրառելու օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցները, վերականգնելու մինչև խախտումը եղած դրությունը, կատարելու դրանից բխող գործողություններ (այդ թվում՝ հաշվարկ, վերահաշվարկ և այլն), ինչպես նաև տալու դրանց կամ խախտումը վերացնելու վերաբերյալ հանձնարարականներ՝ հաշվի առնելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով սահմանված առանձնահատկությունները: Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ այդ հոդվածի 7-րդ մասով սահմանված անձի կողմից Հանձնաժողովի՝ էներգետիկայի բնագավառում օրենսդրության համաձայն ընդունված իրավական ակտի պահանջը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելն առաջացնում է նախազգուշացում, եթե արարքը չի պարունակում նույն հոդվածի այլ մասերով սահմանված այլ վարչական իրավախախտման հատկանիշներ,

8) «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովի որոշումը, բացառությամբ հանրային իրավական դրամական պահանջների, այդ թվում՝ տուգանք կիրառելու մասին որոշման, ուժի մեջ մտնելու օրվանից ենթակա է անհապաղ, սակայն ոչ ուշ, քան որոշման մեջ

սահմանված ժամկետում կատարման, և դրա բողոքարկումը չի կասեցնում դրա գործողությունը կամ կատարումը, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին, 9-րդ մասերն ու «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Որոշման №2 հավելվածով սահմանված Պահանջների 18-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
- նոյեմբերի 2026թ.